17 FEB 2010
336.3
9-68

# ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ

**Թեգիսներ ագիտատորների համար՝ գյուղացիական խաղարկու փոխառության մասին**

1. Գյուղացիական խաղարկու փոխառությունը ձեռնարկված է ՍԽՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1924 թվի մարտի 19-ի վորոշմամբ։

Կառավարությունը ձեռնարկել է գյուղացիական փոխառություն, վորպեսզի թեթևացնի գյուղացիների համար գյուղատնտեսական հարկի վճարումը և հնարավորություն տա նրանց, վոր հարմար և ձեռնտու պայմաններով պահ տան իրենց խնայողությունները ու ժամանակավորապես ազատ մնացած գումարները։

Գյուղացիական փոխառությունը միանվագ ծախսերի (գյուղատնտեսական հարկը վճարելու, ինվենտար գնելու և այլն) համար հատկացվող խնայողությունների պահպանման ամենահարմար և միևնույն ժամանակ ամենաձեռնտու յեղանակն է։

Գյուղացիական փոխառությունը—ոգտավետ, շահութաբեր «խորհրդային սնդուկ է»։ («советская кубишка»)։

2. Գյուղացիական փոխառությունից գյուղացին շատ մեծ ոգուտներ է ստանալու։ Առաջին ոգուտը գյուղատնտեսական հարկի վճարման թեթևանալն է։

Գյուղացիական փոխառության ոբլիգացիաները (պարտատոմսերը) լինում են մեկ ռուբլիանոց, յերեք ռուբլիանոց և հինգ ռուբլիանոց։ Այդ պարտատոմսերը կարելի յե գնել վաճառքի սկզբում ռուբլիանոցը 87 կոպեկով (յերեք ռուբլիանոցը 2 ռ. 61 կ. և հինգ ռուբլիանոցը 4 ռ. 35 կոպեկով)։

Իսկ գյուղատնտեսական հարկ վճարելիս այդ պարտատոմսերն ընդունվում են պարտատոմսերի վրա նշանակված գումարի լրիվ արժեքով, այսինքն 1, 3 և 5 ռուբլիով։ Յեթե գյուղացին գնել է տաս հատ մեկ ռուբլիանոց կամ յերկու հատ հինգ ռուբլիանոց պարտատոմս, նա կվճարի միայն 8 ռ, 70 կոպ., իսկ գյուղատնտեսական հարկ կվճարի դրանով 10 ռուբլու։

Պարտատոմսերի լրիվ արժեքով կարելի յե վճարել նաև գյուղմիասհարկի ապառքը և սերմանման համար տրված վարկը։

20.03.2013



3. Այդ առաջին ոգուտը—գյուղատնտեսական հարկի վճարման թեթևացումը—գյուղացին կստանա լիովին, յեթե պարտատոմսերը ժամանակին գնի, այսինքն այն ժամանակ, յեր կսկսվի նրանց վաճառքը։ Վորքան ուշ գնի գյուղացին պարտատոմսը, այսինքն, վորքան մոտիկ լինի գյուղատնտեսական հարկի վճարման ժամանակն, այնքան թանկ կլինեն պարտատոմսերի գները։ Այս մասին գյուղացին պետք է իմանա անցյալ տարվա փորձից, յերբ հարկի վճարման ժամանակ մեկ ռուբլիանոց պարտատոմսի գինը, նրա սկզբնական գնի համեմատությամբ՝ բարձրացավ 8 կոպեկով։

Գյուղմիասնարկի գանձումն սկսելուց առաջ, 1925 թ. ոգոստոսի սկզբին, պարտատոմսերի վաճառքը բոլորովին կդադարեցվի։

4. Յերկրորդ ոգուտը—տոկոսներն են։ Պարտատոմսը տարեկան 5 տոկոս յեկամուտ է բերում։

1926 թվի փետրվարի մեկին պարտատոմսից կարելի յե կտրել նրան կպած կտրոնը և ստանալ այդ տոկոսը. մեկ ռուբլիանոց պարտատոմսի կտրոնին 5 կոպ., յերեք ռուբլիանոցին 15 կոպ. և հինգ ռուբլիանոցին 25 կոպ.

Պարտատոմսից այդ յեկամուտն ստանալու համար գյուղացին լավ կանի, վոր գյուղմիասնարկի գանձման սկիզբին դրամով վճարի հարկի առաջին մուծանքները, իսկ պարտատոմսը պահի մինչև փետրվարը, յերբ նա տոկոս կբերի։

Փետրվարի 1-ից սկսած մեկ ռուբլիանոց պարտատոմսով կարելի յե վճարել 1 ռ. 15 կոպ. հարկ, յերեք ռուբլիանոցով՝ 3 ռ. 15 կոպ. և 5 ռուբլիանոցով՝ 5 ռ. 25 կոպ. հարկ, վորովհետև այս դեպքում հաշվելուց նաև կտրոնի արժեքը։

Մեր ասած ձևով 8 ռ. 7 կ. պարտատոմսի տվողը փետրվարի մեկից հետո այդ պարտատոմսով կարող է վճարել վոչ թե 10 ռ., այլ 10. 50 կոպեկի հարկ, այսինքն կշահի 1 ռ. 80 կ.

5. Յերրորդ ոգուտը—խաղարկման ժամանակ այս կամ այն գումար շահելն է (выигрыш)։ Գյուղացիական փոխառության պարտատոմսերով վեց անգամ խաղարկություն է կատարվելու։ Այդպիսի յերկու խաղարկում արդեն կատարվել է 1924 թվի սեպտեմբերին և դեկտեմբերին։ Առաջիկա խաղարկումները լինելու յեն 1925 թվի մայիսին, ոգոստոսին և դեկտեմբերին և 1926 թվի ապրիլին, ոգոստոսին և դեկտեմբերին։

Յուրաքանչյուր խաղարկման մեջ կա 22.160 շահող տոմս



250.000 ռ. արժողությամբ, վորոնք այս կերպ են բաժանված.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | շահող | տոմս | 1.000 | ռուբլիանոց |
| 150 | » | » | 100 | » |
| 750 | » | » | 50 | » |
| 2 500 | » | » | 25 | » |
| 6.500 | » | » | 10 | » |
| 12.500 | » | » | 5 | » |

Յերեք ռուբլիանոց պարտատոմսն ունի յերեք համար, 5 ռուբլիանոցը հինգ համար (№)։ Յուրաքանչյուր համար կարող է շահել մյուսներից անկախ կերպով, վորովհետև խաղարկումը համարներով է կատարվելու։

Շահած պարտատոմսն իր ուժը չի կորցնում. նա կարող է շահել նաև հետևյալ խաղարկումների ժամանակ, նա իր լիակատար արժեքը պահպանում է գյուղմիասնարկը վճարելիս, նրա կտրոնների արժեքը վճարվում է։ Շահած գումարի վրա վոչ մի հարկ և վոչ մի տուրք չի տրվում։

Ով ուզում է մասնակցել բոլոր խաղարկումներին, պարտատոմսերը պետք է պահի մինչև 1926 թվի վերջը։ Պարտատոմսով միշտ կարելի յե հարկ վճարել. պարտատոմսը կնդունվի. թե 1925 և թե 1926 թ. հարկի գանձման ժամանակ։ Բացի այդ, 1926 թվի ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը պետությունը հետ է գնելու պարտատոմսերը, դրամով վճարելով նրանց լրիվ արժեքը, այսինքն այն գումարը, վոր նշանակված է պարտատոմսերի վրա։

6. Սուր կարիքի դեպքում գյուղացին կարող է պարտատոմսը վաճառել կամ գրավ դնել։ Լավագույնը վերջինս է։ Աշխատավորական խնայողական գրամարկղները պարտատոմսերի դիմաց փոխառություն են տալիս նրանց արժեքի 75 տոկոսի չափով. այսինքը մեկ ռուբլիանոցի դիմաց 75 կոպեկ. իսկ գյուղատնտեսական վարկի ընկերություններն ու գյուղատնտեսական բանկերը պարտատոմսերը ընդունում են ի ապահովումն իրենց տված փոխառության։ Այդ փոխառությունը գյուղացին յերբ ել վոր վերադարձնի, իր պարտատոմսը կարող է հետ ստանալ։ Պարտատոմսերի համարները չշփոթելու համար, խնայողական գրամարկղները, գյուղատնտեսական բանկերը և գյուղատնտեսական վարկային ընկերությունները պարտամուրհակները տրված փոխառության դիմաց գրավ վերցնելիս, անդորրագրեր են տալիս գյուղացիներին, այդ անդորրագրերում նշանակելով գրավ վերցրած

պարտատոմսի համարը: Պարտատոմսերը գրավ են ընդունվում նաև կապալառման ու հայթայթումների (подряды и поставки) ժամանակ: Այս գործարքներից և ոչ մեկը ոչ մի տուրքագրման չի յենթարկվում: Գրավ դրած պարտատոմսերի շահումները (выигрыши), յեթե փոխառությունը վերադարձնելու ժամկետը չի անցել, ոչ թե դրամարկղին կամ բանկերին են հասնում, այլ գրավ դնող գյուղացիներին:

7. Գյուղացիական փոխառության հարմարություններն ու շահավետությունը պարզ են և ակնհայտ: Բայց դրանից լիակատար չափերով օգտվելու համար անհրաժեշտ է.

ա) Պարտատոմսերը գնել վաղօրոք, յերբ դեռ նրանց գինը ցածր է.

բ) Պարտատոմսերով գյուղատնտեսական հարկ վճարել կարելույն չափ ուշ, վորով հնարավոր կլինի կարոնների յեկամուտըն ստանալ լրիվին և մասնակցել բոլոր խաղարկումներին:

Վորպեսզի գյուղացին հնարավորություն ունենա գնել պարտատոմսերն առանց միջնորդի օգնության դիմելու, վորը փոխառության օգուտի շոշափելի մասն իրեն է վերցնում, ինչպես անցյալ տարի հաճախ եր լինում, պարտատոմսերն այս տարի այլ կերպ են վաճառվում: Փոխառությունը գլխավորապես տարածում է շրջանի գործկոմը: Նրա նախագահը, կամ անդամներից վորևե մեկը փոխառության տարածման լիազոր է համարվում տվյալ շրջանում:

Պարտատոմսերի վաճառքը կատարում է այդ լիազորը, ինչպես և այլ անձինք, (ուսուցիչը, բժիշկը, գյուղատնտեսը անհատ գյուղացիներ և այլն), ում նա այդ գործին կը կանչի: Վաճառքը կատարում են նաև փոստային բաժանմունքները և կոոպերատիվները: Պարտատոմսերի վաճառք կատարողները տալիս են նաև փոխառությանը վերաբերվող տեղեկանքներ ու պարզաբանություններ: Այսպիսով փոխառության պարտատոմս գնելու կամ տեղեկանք ստանալու համար հեռու գնալու կարիք չի լինի: Համարյա թե յուրաքանչյուր գյուղում կը լինեն պարտատոմս վաճառող և փոխառության մասին տեղեկանք ու խորհուրդ տվողներ:

8. Գյուղացիական փոխառության պարտատոմսերի վաճառքը կատարվելու յե ոչ թե միայն գյուղում, այլ և քաղաքում. այստեղ այդ գործը կատարելու յեն բանկերը և փոխադարձ վարկի ընկերությունները: Այստեղ պարտատոմս կարող են գը-



նել՝ բանվորներն ու ծառայողները՝ գյուղ ուղարկելու համար, կարող են գնել նաև քաղաքի մյուս բնակիչները, յեթե կամենում են ձեռնտու պայմանով պահ տալ իրենց խնայողությունները. վերջապես այստեղ պարտատոմս են գնում գյուղում այս կամ այն օպերացիան կատարող կազմակերպությունները:

9. Գյուղացիական փոխառության պարտատոմսի գնումը կամավոր է: Վոչ վոք իրավունք չունի, թեկուզ կողմնակի ճանապարհով հարկադրելու, վոր այս կամ այն անձը պարտատոմս գնի: Այդպիսի ստիպման յուրաքանչյուր փորձի դեմ պետությունը կը կռվի ամենակտրուկ միջոցներով: Այս բանում պետությանն օգնության պետք է գա ինքը՝ բնակչությունը, ստիպման բոլոր դեպքերի մասին հաղորդելով գավառի, գավառամասի, նահանգի, ֆինմարմիններին, տվյալ հանրապետության կամ ՍԽՀՄ ֆինժողկոմատին, կամ փոխառության իրացման շրջանային լիազորներին, վորոնք լիազորված են դատ բացելու բոլոր այն անձանց դեմ, ովքեր կը փորձեն սրա կամ նրա վզին ստիպմամբ պարտատոմս փաթաթել:

10. Գյուղացիության համար գյուղատնտեսական հարկ վըճարելը թեթևացնելով և նրանց խնայողությունները հարմար ու շահավետ կերպով պահ տալու հնարավորություն տալով գյուղացիությանը, պետությունը, գյուղացիության փոխառության, ինչպես և այլ փոխառությունների ձեռնարկելով, պետական գանձարան է հավաքում բնակչության ձեռքին ժամանակավորապես ազատ մնացած դրամը:

Բնակչությունից փոխառություն վերցնելով և դրա փոխարեն նրան վորոշ շահ տալով, պետությունը հավաքած գումարներն օգտագործելու յե ամբողջ ժողովրդական տնտեսության և մանավորապես գյուղատնտեսության բարձրացման համար: Գյուղատնտեսական ինվենտար պատրաստելը, վոռոգման և ցամաքեցման աշխատանքները, հացաբույսերի վնասատուների դեմ կռիվը, ժողովրդական կրթության, ժողովրդական առողջապահության գործի բարելավումը և այլն, մեծ ծախսեր են պահանջում: Գանձարանը բավականաչափ գումարներ չունի և այդ պատճառով փոխառության է դիմում յերկրի բնակչությանը:

Խորհրդային կառավարությունը հուսով է, վոր գյուղացիների ու բանվորների ուժերով ու օգնությամբ, գուցե դանդաղ, բայց անյերկբայելի կերպով կը կարողանա վերականգնել, առողջացնել և ծաղկեցնել ամբողջ ժողովրդական տնտեսությունը և բարձրացնել բնակչության բարեկեցության մակարդակը:

# ՀԱՎԵԼՎԱԾ

## ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ

### 1. Գյուղացիական փոխառության պարտատոմսերի վաճառքը կատարվում է

ա) Շրջանային լիազորների և գյուղական գործակալների միջոցով։

բ) Գյուղական կոոպերատիվներում։

գ) Փոստ-հեռագրական բաժանմունքներում։

դ) Գավառական, նահանգական ֆինբաժինների դրամարկղներում։

ե) Խնայողական դրամարկղներում և բոլոր բանկերում։

### 2. Տոկոսների յեվ շահած գումարների (ВЫИГРИШ) վճարում կատարվում է

ա) Գավառական, և նահանգական բաժիններում։

բ) Պետական բանկի բաժանմունքներում և գործակալություններում։

գ) Աշխատավորական խնայողական դրամարկղներում։

դ) Փոստ-հեռագրական հաստատություններում։

Տոկոսները վճարվում են կտրոնը ներկայացնելիս։ Կտրոնն այնպես պետք է կտրված լինի, որ նրա վրա համարն (№) ու ստորագրությունը չը պատռվեն, հակառակ դեպքում կտրոնը կը կորցնի իր ուժը։ Դրամը տրվում է կտրոնը ներկայացնելուն պես։

Շահած դրամն ստանալու համար պետք է միայն ներկայացնել պարտատոմսը (առանց գրավոր դիմումի) և դրամն անմիջապես, կամ ծայրահեղ դեպքում ոչ ուշ քան մինչև այդ բանվորական օրվան վերջանալը, կը վճարվի։ Շահած գումարը վճարելուց հետո, պարտատոմսն իր տիրոջն է վերադարձվում։

Միայն 1000 ռուբլիանոց շահումներն են, որ վճարում է պետ բանկի վարչությունը Մոսկվայում։ Ուղղակի Մոսկվա դիմելու կարիք չկա։ Այն հիմնարկությունը, որին ներկայացվել է պարտատոմսը հազար ռուբլիանոց շահումն ստանալու համար, պարտատոմսը Մոսկվա յե ուղարկում նրա ճշտությունը ստուգելու համար և պարտատոմսը հետ ստանալուն պես վճարում է



շահումը։ Պարտատոմսը Մոսկվա ուղարկելու ժամանակամիջոցում նրա տիրոջը համապատասխան անդորրագիր է դրվում։ Անդորրագրում պետք է նշանակվի պարտատոմսի համարը։

Շահումը վճարելուց ոչ մի գանձում և հատկացում անելու իրավունք չի տրվում ոչ ոքի։

Տոկոսների պահանջման համար սահմանված է յեռամյա արտոնյալ ժամանակամիջոց, այսինքն մինչև 1929 թվի փետրվարի մեկը և շահումը պահանջելու համար նույնպես յեռամյա ժամանակամիջոց, այդ ժամանակամիջոցի սկիզբ համարելով այն խաղարկման օրը, յերբ տվյալ պարտատոմսը շահել է պահանջվող գումարը։ Պարտատոմսի արժեքը դրամով վճարելու համար ևս 3-ամյա ժամանակամիջոց է սահմանված, այդ ժամանակամիջոց է սահմանված, այդ ժամանակամիջոցը 1927 թվի հունվարի 1-ից մինչև 1930 թվի 1-ը հաշվելով։

4. Գյուղացիական փոխառության տոմսերի խաղարկումը կատարում է մի հատուկ հանձնաժողով. բաղկացած գյուղացիական, հասարակական, կոոպերատիվ, պետական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներից։ Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝ գյուղացիական փոխադարձ ոգնության կենտրոնական կոմիտեյի, Հողանտառի աշխատողների արհմիության կենտրոնական Կոմիտեյի Գյուղատնտեսական կոոպերացիայի, Բանվորա-գյուղացիական Տեսչության և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները։

Խաղարկումը կատարվում է հատուկ մեքենայով, որ ելեքտրական ուժով է բանում։

Հանված տոմսերից, որոնց վրա թվանշաններ են գրված, կազմվում է շահող պարտատոմսերի համարները։

Համարները հայտարարում են հանձնաժողովի նախագահն ու յերկու անդամները և միաժամանակ գրանցվում են հինգ տեղում հատուկ քարտերում և հատուկ մատյաններում։

Խաղարկությունը տեղի յե ունենում հրապարակով. խաղարկմանը կարող է ներկա գտնվել յուրաքանչյուր ցանկացող։ Ներկայեղողները հերթով և խմբովին կարող են դիտել խաղարկման վողջ գործողությունը և հետևել խաղարկիչ հանձնաժողովի աշխատանքին։

Բոլոր ներկա յեղողները կարող են իրենց ցանկացած հարցը տալ փոխառության ու խաղարկման մասին և անմիջապես մանրամասն պատասխան կստանան Հանձնաժողովից։

27915



Խորհրդային կառավարությունը ճշտապահ և անկողմնակալ կերպով է կատարում իր պարտավորությունները բնակչության հանդեպ։

5. Բոլոր շահած պարտատոմսերի համարները խաղարկման միջոցին տպվում են «Իզվեստիա» լրագրում և արտատպվում են շատ տեղական լրագրներում։

Խաղարկումը վերջանալուց հետո կազմվում է շահած համարների հատուկ տախտակ և ուղարկվում է բոլոր գյուղխորհուրդներին, շրջանային գործկոմներին, կին-բաժիններին, խնայողական դրամարկղներին, բանկերի բաժանմունքներին փոստհեռագրական բաժանմունքներին ու կոոպերատիվներին։ Բացի այդ, շահած համարները հայտնի յե լինում բոլոր տեղական լրագրերի խմբագրություններին, վորոնք պատասխանում են խաղարկման արդյունքների մասին արվող գրավոր դիմումներին։

6. Պարտատոմսերը կարելի յե ձրիաբար պահ տալ բոլոր գավառային, նահանգական ֆին բաժիններում և խնայողական դրամարկղներում։

7. Յեթե խաղարկման ժամանակ շահել է այն պարտատոմսը, վորով գյուղատնտեսական հարկ է վճարված, շահած դրամը վոչ վոքի չե վճարվում։

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0207097
300
Ձ522-93

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրատ. 93բ. Տիրաժ 1500 Պատվ. 4132